


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԱՌՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ 15.07.2020թ ԿՆՔՎԱԾ N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2020/2ՏՀ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1	AGREEMENT 1 OF THE PUBLIC PROCUREMENT CONTRACT ON PROCUREMENT OF TECHNICAL SUPERVISION SERVICES FOR THE STATE NEEDS SIGNED ON 15.07.2020 WITH THE CODE N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2020/2ՏՀ
ք.երևան <u>«18» 05</u> 2021թ.	Yerevan <u>"18" 05</u> 2021.
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԿՈՔՍ ՔՆՍԱԼԹ ԳՄԲՀ ընկերությունը, ի դեմս ԿՈՔՍ ՔՆՍԱԼԹ ԳՄԲՀ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ առանձնացված ստորաբաժանման ծրագրերի ղեկավար՝ Կնուտ Դիետեր Մյուլերի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 15.07.2020թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2020/2ՏՀ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 541-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.	The Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia, represented by H. Batikyan, the Secretary General of the Ministry, acting on the basis of the charter (hereinafter referred to as the Client), on the one hand and German company "Cox-Consult" acting in the name of Dieter Muller, Head of special subdivision programs of the Armenian branch of German company "Cox-Consult" (hereinafter referred to as the Contractor), on the other hand, hereinafter referred to as the Parties, guided by the civil legislation of the Republic of Armenia, based on the provision 8.5 of the state procurement Contract TKEN-MAGDZB-2020/2 TC signed between the Parties in 15.07.2020 (hereinafter referred to as Contract) and Decision N 541-N of the Government of the Republic of Armenia of April 15, 2021, signed this Agreement by mutual agreement (hereinafter referred to as the Agreement) on the following:
1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌՈՐԿԱՆ	SUBJECT OF THE CONTRACT AGREEMENT
Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N2127-Ն որոշման Պայմանագրի թիվ 1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցով սահմանված և 2020 թվականի դեկտեմբերի 10-ին չավարտած ճանապարհատվածների հիմնանորոգման աշխատանքների համար սահմանվել է նոր վերջնաժամկետ՝ 2021 թվականի հուլիսի 30: Պայմանագրով ծառայության մատուցման ժամկետ է սահմանված է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց ներկայացված համապատասխան ճանապարհատվածների շինարարական աշխատանքների ավարտական հանձնման- ընդունման ավարտը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 541-Ն որոշումը և պայմանավորված վերոգրյալով կողմերը որոշեցին՝	2021 July 30 was defined as a new deadline for road construction works on unfinished roads, which were not completed on December 10, 2020, according to the technical description-purchase schedule defined in Annex 1 of the Contract of RA Government Decision N2127-N of December 22. The term of service is defined the end of the final Handover-Acceptance of the construction works of the respective road sections presented in the Technical Description-purchase schedule defined in Annex 1 of the Contract. Based on the decision N 541-N of the Government of the Republic of Armenia of April 15, 2021, due to the above, the Parties decided:
1.1 Պայմանագրի 4.1 կետը փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ. «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 527,868,665 (հինգ հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 2021թ-ին իրականացվելիք վճարման գումարը կազմում է 52,786,865.9 (հիսուներկու միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ, ինչուսում լումա, ներառյալ ԱԱՀ-ն:» 1.2 Պայմանագրի թիվ 1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից ներկայացվող Հավելված 1-ի: 1.3 Պայմանագիրը լրացնել նոր՝ կից ներկայացվող թիվ 1.2 Հավելվածով՝ համաձայն կից ներկայացվող Հավելված 1.2-ի: 1.4 Պայմանագրի թիվ 2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից ներկայացվող Հավելված 2-ի:	1.1. Modify provision 4.1 of the Contract, rewrite it as follows: The price of the Service to be performed by the Contractor under this contract is 527,868,665 (five hundred twenty-seven million eight hundred sixty-eight thousand six hundred sixty-five) AMD, including VAT, the amount to be paid in 2021 is 52,786,865.9 (fifty-two million seven hundred eighty-six thousand eight hundred sixty-five) AMD, ninety lumas, including VAT." 1.2. Rewrite Annex 1 of the Agreement in accordance with Annex 1 attached. 1.3. Add a new Annex 1.2 to the Agreement in accordance with Annex 1.2 attached. 1.4. Rewrite Annex 2 of the Agreement in accordance with the attached Annex 2.
2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: 2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ: 2.3 Սույն համաձայնագիրը բաղկացած է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով երկու	2. OTHER CONDITIONS 2.1. This Agreement shall enter into force upon signature by the Parties and shall form an integral part of the Contract. 2.2. The rights and obligations provided for the Parties by the Contract, and which are not specified in this Agreement, shall remain unchanged.

օրինակից: Անգլերեն և հայերեն տեքստերի միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը: Սույն համաձայնագրի N 1, N 1.2, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:	2.3. This Agreement consists of 2 (two) pages and is signed in two copies in Armenian and English. In case of any discrepancies between the English and Armenian texts, the Armenian version shall prevail. Annexes N 1, N 1.2, N 2 to this Agreement are the integral parts of the Contract, each party is given a copy of the contract.	
ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ADDRESSES OF THE PARTIES, BANK CERTIFICATIONS AND SIGNATURES	
Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ	
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան Չափաբաժին 1 ՀՀ 900011002632 Չափաբաժին 2 ՀՀ 900011005817 ՀՎՀՀ 02815457 գլխավոր քարտուղար Հ. Բատիկյան ----- /ստորագրություն/ Կ.Տ	ԿՈՔՍ ՔՆՍԱԼԹ ԳՄԲՀ ընկերությունը Հասցե՝ 56068 Կոբլենց, Շտեգեմանստր. 32-38 Գերմանիայի Դաշնային Հանրապետություն Գրանցված՝ ԳԴՀ, Կոբլենց HR B 1310 համարի ներքո	“ԿՈՔՍ ՔՆՍԱԼԹ ԳՄԲՀ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ” առանձնացված ստորաբաժանում Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Չարենցի փ. 1 տ., 2-րդ հարկ, 207 սենյակ ՀՎՀՀ 02638571 ԱԱՀ վճարողի հաշվարկման համար՝ 02638571/1 ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ 163078039662 Տնօրեն՝ Քարստեն Գրիզե Լիազորված անձ՝ Ծրագրերի ղեկավար՝ Կնուտ Դիետեր Մյուլեր ----- /ստորագրություն/ Կ.Տ
CLIENT	Performer	
RA Ministry of Territorial Administration and Infrastructure Address: Government Building 3, Yerevan 0010 Central Treasury of the Republic of Armenia Bank account number: LOT 1 900011002632 LOT 2 900011005817 Tax Payer Identification Number: 02815457 Secretary General H. Batikyan  SEAL	Kocks Consult GMBH Adr.՝ 56068 Koblenc, Shtegemanstr 32-38 Federal Republic of Germany Registered ՝ FRG, Koblenc HR B under the number 1310	“ Kocks Consult GMBH Armenian Branch” Separate Subdivision Legal Adress՝ RA, Yerevan, str.Charents. 1 apt., 2-nd floor, 207 room TPIN 02638571 VAT payer identification number՝ 02638571/1 ArmeconomBank OJSC RA 163078039662 Director Qarsten Grize Authorized Person Project Manager՝ Knut Dieter Muller  SEAL

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71351540/70	Ստորև	դրամ	458,552,795	1	Ըստ ցանկի	Ստորև
	71351540/2	Ստորև	դրամ	50,950,311	1	Ըստ ցանկի	Ստորև
2	71351540/71	Ստորև	դրամ	16,529,004.1	1	Ըստ ցանկի	Ստորև
	71351540/3	Ստորև	դրամ	1,836,554.9	1	Ըստ ցանկի	Ստորև

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

(2020 թվականին իրականացված)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵՂԱՄԱՍ 3

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տեղամաս 3-ում (ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի մարզեր) նախատեսված օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ծրագրի անվանումը

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում

Ֆինանսավորման աղբյուր

2020թ. ՀՀ պետական բյուջե

Պարզվիրաբու

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ծառայության անվանումը

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տեղամաս 3-ում (ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի մարզեր) նախատեսված հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ճանապարհների

անվանումները և հապավածները

ՏԵՂԱՄԱՍ 3

h/h	Օբյեկտի անվանումը	Երկարությունը կմ	Մարզ	Շին. աշխ. Կատ. Ժամկետ
1	2	3	4	
	2020 Պետական բյուջե	101.6		
1	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	56.70		
1.1	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման	12.00		
	կմ134+500-կմ141+500 հատվածի հիմնանորոգում	7.00	Շիրակ	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	կմ143+300-կմ148+300 հատվածի հիմնանորոգում	5.00	Շիրակ	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
1.2	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման	31.30		

	կմ82+000 - կմ91+600 հատվածի հիմնանորոգում	9.60	Արարատ	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	կմ270+000-կմ277+000 հատվածի հիմնանորոգում	7.00	Սյունիք	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	կմ284+400-կմ289+100 հատվածի հիմնանորոգում	4.70	Սյունիք	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	կմ364+000 -կմ374+000 հատվածի հիմնանորոգում	10.00	Սյունիք	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
1.3	Մ- 3, Թուրքիայի սահման- Մարգարա-Վանաձոր-Տաշիր- Վրաստանի սահման	6.00		
	կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգում	3.50	Արագածոտն	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	կմ127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգում	2.50	Լոռի	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
1.4	Մ10, Սևան-Մարտունի-Գետափ	7.00		
	կմ50+000 - կմ57+000 հատվածի հիմնանորոգում	7.00	Գեղարքունիք	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
1.5	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս	0.40		
	կմ53+400-կմ53+800 հատվածի ասֆալտապատում	0.40	Գեղարքունիք	90 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
2	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	35.00		
	Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան կմ 26+400 - կմ 30+000 հատվածի հիմնանորոգում	3.60	Արարատ	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	Հ-21, Հոռոմ-Արթիկ-Ալազյազ ավտոճանապարհի կմ 4+000-կմ8+500 հատվածի հիմնանորոգում	4.50	Շիրակ	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	Հ34, Մ3-Ստեփանավան-Պրիվոլնոյե- Վրաստանի սահման կմ 5+000 - կմ 18+000 հատվածի հիմնանորոգում	13.00	Լոռի	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	Հ-53, Մ-4 - Սեմյոնովկա - Մ-4 հանրապետական նշանակության ավտոճանապարհի անցանելիության բարելավում	13.90	Գեղարքունիք	90 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
3	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	9.90		
	S-1-54, Մ3-Սիփան-Սպիտակի լեռնանցք ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+800 հատվածի հիմնանորոգում	3.80	Արագածոտն	120 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	S-1-55, /S-1-54/-Ավշեն ավտոճանապարհի կմ 0+000 - կմ 2+300 հատվածի հիմնանորոգում	2.30	Արագածոտն	90 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
	S-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-Հ- 33/ կմ0+000-կմ3+800 հատվածի հիմնանորոգում	3.80	Լոռի	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
4	Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում,այդ թվում			
4.1	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի- Իրանի սահման			

	կմ45+000 կամրջի նորոգում	1.00	Արարատ	90 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
4.2	/Մ-4/ (Վերին Պտղնի) - Մասիսի տրանսպորտային հանգույց (Երևանի շրջան)			
	կմ6+800 կամուրջի վերանորոգում	1.00	Կոտայք	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
4.3	Հ-12, Մասիսի տրանսպորտային հանգույց-Մասիս-Ռանչպար-Արաքս-Ջրառատ-Մ-3/			
	կմ3+450 հատվածում փլուզված կամրջի հիմնանորոգում	1.00	Արարատ	60 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը

Նախատեսված շինարարական աշխատանքի տեսակը

Տեխնիկական հսկողության ծառայության մատուցման ձևեր, եղանակներ և ընդհանուր պահանջներ

Ըստ նախագծային փաստաթղթերի

1. Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն, ապահովելով տեխնիկական հսկողության ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեղամասային հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում (<https://www.arlis.am/documentView.aspx?docID=19495>) բերված հետևյալ դրույթների՝

1.1 Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, հսկողական չափագրումներով, աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներով, փորձարկումներով:

1.1.1 Հսկողական ստուգում - պարզում է արդեն կատարված շինմոնտաժային աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին և շինարարական նորմերին և կանոններին: Հսկողական ստուգումը կարող է իրականացվել համատարած կամ ընտրովի:

1.1.2 Բացումը - հողով կամ այլ կոնստրուկցիաներով ծածկված շինարարական կոնստրուկցիաների, կոմունիկացիաների և կառուցվածքների վիճակի ստուգումն է ուղղահայաց փոսերի օգնությամբ կամ ծածկող կոնստրուկցիաների մասնակի քանդման ճանապարհով:

1.1.3 Հսկողական չափագրություն - փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների ստուգումն է տեղում:

1.1.4 Աշխատանքների նախագծային ծավալների ստուգում - աշխատանքային գծագրում կամ նրանց կից նախահաշիվներում նշված աշխատանքների ծավալների ստուգում:

1.1.5 Փորձարկում - լաբորատոր պայմաններում կամ տեղում փորձնական բեռնվածքների գործիքների և մեխանիզմների օգնությամբ կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի կրողունակության, ամրության, տարբեր տեսակի մեկուսացման, ինչպես նաև այլ ֆիզիկամեխանիկական և տեխնիկական հատկությունների ստուգումն է նախագծի պահանջների և նորմերի հետ համեմատելու նպատակով:

1.2 Ստուգումների և դիտարկումների արդյունքները ձևակերպվում են ակտերով, արձանագրություններով, ուրվագծերով, գծագրերով, լուսանկարներով, տեսաֆիլմերով և նրանց կից համեմատական ամփոփագրերով, աշխատանքային գծագրերով, շինարարության վարման ընդհանուր մատյաններով:

1.3 Շինմոնտաժային աշխատանքների որակի, օգտագործվող նյութերի, իրերի և կառուցվածքների որակի, աշխատանքների կատարման տեխնոլոգիաների և այլնի հետ կապված նկատված թերությունների վերացման ցուցումներն ու նկատողությունները գրանցվում են սահմանված ձևի շինմոնտաժային աշխատանքների վարման ընդհանուր մատյանում:

1.4 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են՝

1.4.1 մասնակցել ավտոճանապարհների, տրանսպորտային օբյեկտների և ինժեներական կառուցվածքների նշահարմանը, շինարարության ընթացքում ապահովել գեոդեզիական ստուգողական չափումներ և չափագրություններ,

1.4.2 համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցնել ինժեներական սարքավորումների տեղադրման, գրանցման և փորձարկման հետ կապված հարցերը,

1.4.3 պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին,

1.4.4 ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքների գոյությունը և նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպել համապատասխան ակտերով,

1.4.5 իրականացնել պատասխանատու կոնստրուկցիաների և հանգույցների միջանկյալ ընդունումը, այն ձևակերպել համապատասխան ակտերով,

1.4.6 շինարարության ընթացքում աշխատանքային գծագրերում ամրագրել հաստատված նախագծում սահմանված կարգով կատարված բոլոր փոփոխությունները,

1.4.7 աշխատանքների ընդհանուր մատյանում նշել իր նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունների ու դրանց վերացման մասին,

1.4.8 մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը,

1.4.9 հետևել շինարարական կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանը,

1.4.10 անավարտ աշխատանքների և թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել դրանց վերացման ժամկետները, կառուցապատողին հանձնել այդ տեխնիկական փաստաթղթերը,

1.4.11 մասնակցել շինարարական կազմակերպություններից ստացված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարության օբյեկտների ընդունմանը, ինչպես նաև ակտով նրանց հանձնելուն՝ նշելով այդ օբյեկտների տեխնիկական վիճակը:

1.5 Կատարված աշխատանքների տեսակների ու ծավալների ընդունումը իրականացվում է՝

1.5.1 ծածկվող աշխատանքների ընդունման ակտերի ձևակերպման միջոցով,

1.5.2 կատարված աշխատանքների, օգտագործված կոնստրուկցիաների որակը հավաստող հավաստագրերի, ինչպես նաև օգտագործված նյութերի լաբորատոր փորձարկումների արդյունքների և որակը հավաստող հավաստագրերի ստուգման և գնահատման միջոցով,

1.5.3 հետագա աշխատանքների իրականացմանը օբյեկտի տեխնիկապես պատրաստ լինելու մասին միջանկյալ ընդունման ակտերի միջոցով:

1.6 Այն հիմնական շինմոնտաժային աշխատանքների ցանկը, որոնց համար անհրաժեշտ է կազմել ծածկված աշխատանքների ընդունման ակտեր, բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ում: Ծածկված աշխատանքների ընդունման ակտի ձևը բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 2-ում: Ծածկված աշխատանքների ընդունման կազմակերպումը դրվում է աշխատանքներն իրականացնողի վրա: Ընդունման աշխատանքներին մասնակցում են կառուցապատողի տեխնիկական հսկողությունը, գլխավոր կապալառուի, ենթակապալառուների (իրենց մասնակցության մասով), հեղինակային հսկողությունը և այլ շահագրգիռ անձինք: Ակտերի օրինակների քանակը համապատասխանեցվում է ակտը ստորագրող անձանց քանակին:

1.7 Շինարարական աշխատանքների և ինժեներական սարքավորումների միջանկյալ ընդունման ակտերի օրինակելի ցանկը համապատասխան ձևի նշումով տես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 3-ում:

Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակները ենթակա են մշտական օպերատիվ հսկողության, որը գրանցվում է շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր մատյանում:

Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների օրինակելի ցանկը, որոնք ենթակա են որակի հսկողության, բերվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 4-ում:

1.8 Ծածկված և միջանկյալ աշխատանքների օպերատիվ հսկողության արդյունքներով տեխնիկական հսկողություն իրականացնում է աշխատանքների որակի գնահատում և գրանցում է այն համապատասխան մատյաններում և ակտերում: Շինմոնտաժային աշխատանքների որակի գնահատականը տրվում է ակտում:

1.9 Չնայած 1.6 կետով նշված ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ին և հավելված 2-ին կատարված հղումներին, պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը ստանձնելուց հետո 5 (հինգ) օրյա ժամկետում, Պատվիրատուն Ծառայություն մատուցողին կտրամադրի

- ճանապարհաշինական հիմնական աշխատանքների համար անհրաժեշտ ծածկված աշխատանքների ընդունման ակտերի ձևը՝ ըստ աշխատանքների առանձին տեսակների:
2. Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեղամասային հսկիչի անհարգելի բացակայության դեպքում տեխնիկական հսկողություն իրականացնողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:
 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին:
 4. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը:
 5. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին:
5.1 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի:
 6. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ըստ անհրաժեշտության տեխնիկողը կարող է պահանջել լրացուցիչ լաբորատոր փորձարկումների իրականացում: Տեխնիկական հսկողը չի կրում լաբորատոր փորձարկումների հետ կապված ծախսերը:
 7. Տեխնիկական հսկողը պետք է ուսումնասիրի, հաստատի և մշտադիտարկի կապալառուների կողմից օգտագործվող նյութերը, դրանց աղբյուրները, անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում իրահանգի կապալառուներին՝ հեռացնելու անորակ նյութերը և ապահովելու դրանց փոխարինումը պատշաճ որակի նյութերով, որոնք անհրաժեշտ են շինաշխատանքների որակի նկատմամբ շինաշխատանքների պայմանագրով և նախագծով սահմանված պահանջները բավարարելու համար:
 8. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար:
 9. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են համապատասխան որակով և ծավալով:
 10. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը, տեխնիկական պահանջները:
 11. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, ճանապարհային անվտանգության սարքերի համապատասխանությունը (օրինակ՝ ժամանակավոր և շարժական պատնեշները, վթարային արգելափակոցները և այլն), անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: Տեխնիկական հսկողություն իրականացնողը պարտավոր է ուսումնասիրել և հաստատել երթևեկության կազմակերպման սխեմաներ և դրանում կատարվող փոփոխությունները: Կատարել համապատասխան ուսումնասիրություններ և առաջարկել ճանապարհային անվտանգության բարելավումներ ու անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել այցեր ճանապարհային օբյեկտներ՝ գիշերային և ցերեկային ժամերին (այդ թվում՝ պատվիրատուի և ճանապարհային ոստիկանության մասնակցությամբ): Ներկայացնել հաշվետվություն՝ կատարված ուսումնասիրությունների, ճանապարհային անվտանգության մասով հայտնաբերված խնդիրների, յուրաքանչյուր խնդրի համար իրականացնել դիտարկի գնահատում, և տալ առաջարկություններ: Ծանապարհային անվտանգության մասնագետները կհամակարգեն ու կվերահսկեն անվտանգության միջոցառումների ժամանակին իրականացումը:
 12. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):

- 13 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
- 14 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պետք է իրականացնեն տեխնիկական հսկողություն աշխատանքները յուրաքանչյուր տեղամասի (ճանապարհահատվածի) նկատմամբ և ընդունեն աշխատանքները՝ նախագծային փաստաթղթերի, ինչպես նաև պայմանագրի պայմանների և տեխնիկական պահանջների համաձայն: Տեխնիկական հսկողություն իրականացնողները պետք է առաջնորդվեն գործող մասնագրերով, սահմանված ստանդարտներով, մեթոդաբանությամբ և ՀՀ օրենսդրությամբ:

Նախագծային փաստաթղթերում նշված աշխատանքների փոփոխություններ կատարելու առաջարկները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի և նախագծի հեղինակային հսկողի միջև:

Տեխնիկական հսկողություն իրականացնողը կապալառուի կողմից աշխատանքները չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու դեպքում պետք է կապալառուին ներկայացնի համապատասխան հրահանգներ և ծանուցումներ: Աշխատանքների ոչ պատշաճ կատարման կամ կապալառուի ցածր առաջընթացի դեպքում, ինչպես նաև, եթե կապալառուն չի հետևում տեխ.հսկողի հրահանգներին և չի բարելավում աշխատանքի որակը, տեխնիկական հսկողը պարտավոր է առաջարկություններ ներկայացնել պատվիրատուին իրավիճակից բխող պայմանագրային և այլ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողը պարտավոր է ապահովել աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը:

Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ

1. Տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության համար նշանակված հիմնական անձնակազմի և յուրաքանչյուր շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչների (տեղամասային հսկիչի) տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար):

2. **Հաշվետվողականությունը.** Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ մոբիլիզացիայի, ամսական և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

3. **Մոբիլիզացիայի մասին հաշվետվություն.** Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում, տեխնիկական հսկողը պետք է ներկայացնի ամփոփ հաշվետվություն՝ ներգրավված անձնակազմի մասին, իր աշխատանքային պլանը և աշխատանքների կազմակերպման մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն կամ առաջարկություններ, որոնք կբարձրացնեն տեխնիկական հսկողության իրականացման արդյունավետությունը:

4. **Ամսական հաշվետվություններ և ճանապարհաշինական ընկերությունների վճարման հավաստագրեր.** ամսական հաշվետվությունները տեխ. հսկողություն իրականացնող ընկերությունը ներկայացնում է յուրաքանչյուր ամսվա 15-ից ոչ ուշ Պատվիրատուի հետ համաձայնեցված ձևաչափով բոլոր շինարարական աշխատանքների օբյեկտների մասով Տեխ.հսկողություն իրականացնողը պետք է ներկայացնի ամսական հաշվետվություն (Հաշվետվությունը պետք է բաղկացած լինի առանձին գլուխներից՝ ըստ համապատասխան ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներին վերաբերող պայմանագրերի), նշելով օբյեկտների անվանումը, համապատասխան շինարարական պայմանագիրը, տեղամասը, կապալառուի տվյալները, պայմանագրի արժեքը, աշխատանքների մեկնարկը և ավարտը, հսկողություն իրականացնող ընկերության անվանումը, աշխատանքների համառոտ նկարագրությունը (հիմնական երկրաչափական պարամետրերը և խոշոր աշխատանքների ցանկը): Հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի վերահսկող թիմի կողմից պատրաստված նախորդ ամսվա աշխատանքների ամփոփումը՝ ներառյալ պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների իրականացման առաջընթացը, ըստ աշխատանքի կատարման ժամանակացույցի, ֆիզիկական և ֆինանսական առաջընթացի տվյալները, կատարված աշխատանքների ընդհանուր նկարագրությունը, արձանագրված թերությունները, դրանց վերացման ուղղությամբ խորհրդատուի կողմից տրված հրահանգները, գոյություն ունեցող խնդիրների համառոտ նկարագրությունները, այդ թվում՝ տեղամասերում արձանագրանցված խնդիրներ և վերջիններիս մասով առաջարկվող լուծումներ, շինարարական աշխատանքների պայմանագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կապալառուի հարցումները, շինարարական աշխատանքների իրականացման շրջանակներում ստեղծված աշխատատեղերը, ինչպես նաև իրականացվող շին. աշխատանքների պայմանագրերից յուրաքանչյուրի մասով Պատվիրատուի կողմից պահանջվող այլ համապատասխան տեղեկատվություն:

Ամսական հաշվետվություններում հորիզոնատուն պետք է ներառի համապատասխան բաժիններ նաև՝ նախկինում զեկուցված խնդիրների կարգավիճակի/առաջընթացի, ինչպես նաև Տեխսկոդի/պատվիրատուի/Կապալառուների կողմից այդ խնդիրների լուծման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Հաշվետվությունը պետք է պարունակի նաև հորիզոնատուի նախորդ ամսվա կատարած աշխատանքների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը և արձանագրությունները (ժամաթերթեր, պատվիրատուի և կապալառուների հետ նամակագրության պատճենները և այլն), ինչպես նաև որակի հսկողության և կառավարման մասով համապատասխան հաշվետվություններ:

Յուրաքանչյուր Ամսական հաշվետվությանը կից պետք է ներկայացվեն տվյալ ամսվա համար Տեխնիկական հսկողություն իրականացնողի վճարման հայտը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

4.1. Հատուկ պահանջներ. Պատվիրատուի լրացուցիչ պահանջով Տեխ. հսկիչը պարտավոր է ներկայացնել նաև իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

4.2 Ավարտական հաշվետվությունը. Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր շինարարական օբյեկտի մասով՝ աշխատանքների հանձնում-ընդունումից հետո՝ 10 օրյա ժամկետում կամ մինչև ծառայությունների ավարտը՝ Պատվիրատուի համար ընդունելի ձևով: Հաշվետվության մեջ պետք է ամփոփվեն բոլոր ճանապարհների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, կարևոր միջոցառումները, կապալառուների կատարողականը և արդյունքները, տեխնիկական և ոչ տեխնիկական ցուցանիշները, և այլն:

4.3 Ծանապարհաշինական ընկերությունների վճարման ավարտական հավաստագրերը առնվազն պետք է ներառեն հետևյալ փաստաթղթերի պատճենները. Ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, կատարված աշխատանքների որակը հավաստող փաստաթղթեր, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով):

**Նորմատիվային
պահանջներ**

Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն համաձայն՝

1. ՀՀՇՆ IV-11.05.02-99
2. Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի,
3. ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,
4. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշման
5. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման:

**Պայմանագրի
կառավարում**

1. Տեխնիկական հսկողություն իրականացնողները իրավունք չունեն Կապալառուներին ազատել իրենց պարտավորությունների կատարումից կամ սահմանել լրացուցիչ պարտավորություններ, որոնք նախատեսված չեն պայմանագրով:
2. Տեխնիկական հսկողություն իրականացնողները ղեկավարվում են կնքված պայմանագրով և ապահովում են պայմանագրի դրույթների իրականացումը՝ կապված աշխատանքների որակի և ծավալի հետ:
3. Կապալառուների հետ առաջացած ցանկացած արբիտրաժային կամ դատական գործընթացի ընթացքում տեխնիկական հսկողություն իրականացնողը պարտավոր է աջակցել կառուցապատողին արբիտրաժային, վիճադատարար հարցերի լուծման խորհրդի կամ դատարանի հետ առնչվող հարցերում՝ նման պահանջ ներկայացնելու դեպքում:

**Տեխնիկական հսկողություն
իրականացնողի
անձնակազմին ներկայացվող
պահանջներ**

1. Որակյալ ծառայություն մատուցելու նպատակով տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է ապահովի համապատասխան անձնակազմ՝ բաղկացած որակավորված և ընդունելի փորձառություն ունեցող այնպիսի մասնագետներից, որոնք ունեն համապատասխան կարողություններ տեխնիկական բնութագրով սահմանված պարտականություններն ու գործառնություններն ապահովելու համար: Հիմնական անձնակազմում ներգրավված մասնագետների փոխարինումը կարող է իրականացվել միայն պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ: Պատվիրատուն իրավասու է պահանջել Տեխսկոդից փոխարինելու ներգրավված ցանկացած փորձագետի կամ մասնագետի, իր վրա դրված պարտականությունների ոչ պատշաճ կատարման, մասնագիտական ոչ բավարար կարողությունների և/կամ գիտելիքների

դրսևորման դեպքում: Անձնակազմի որևէ անդամի մահվան կամ անաշխատունակության դեպքում Տեխ.հսկողը պարտավոր է անմիջապես ապահովել տվյալ մասնագետի փոխարինումը ավելի բարձր կամ համարժեք որակավորում և փորձ ունեցող մասնագետով, առանց պատվիրատուի համար լրացուցիչ ծախսերի: Հիմնական անձնակազմը ենթակա է հաստատման պատվիրատուի կողմից:

2. Տեխհսկողը պետք է ունենա հետևյալ պաշտոնների և քանակի փորձառու հիմնական անձնակազմ՝

Պաշտոն	Նվազագույն պահանջվող քանակ	Միջազգային / տեղական	Փորձառության նվազագույն պահանջ
Թիմի ղեկավար/ոեզիդենտ ինժեներ	1	Միջազգային	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 20 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 15 տարի:
Թիմի ղեկավարի տեղակալ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 13 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Կամուրջների և/կամ արհեստական կառուցվածքների ինժեներ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Կամուրջների և/կամ արհեստական կառուցվածքների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Նյութերի/Որակի ապահովման մասնագետ	1	Միջազգային	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման համար օգտագործվող նյութերի/որակի հսկման մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Նյութերի/Որակի ապահովման մասնագետ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների համար օգտագործվող նյութերի/որակի հսկման մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Ճանապարհային անվտանգության մասնագետ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 7 տարի: Ճանապարհային անվտանգության մասնագիտական փորձ՝ 5 տարի:
Գեոդեզիստ	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Գեոդեզիական չափագրման մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Տեղամասային հսկիչ	14	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 5 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման և/կամ նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 3 տարի:

Հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ծառայություն մատուցողը պետք է ներկայացնի Պատվիրատուին համաձայնեցում ստանալու համար՝ պայմանագիր կնքելուց հետո: Առանձին դեպքերում, առանձնահատուկ օբյեկտների (պատվիրատուի ներկայացմամբ) նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց կցելու հարցը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ:

Բացի վերը նշվածից, տեխնիկական հսկողության ծառայություն մատուցողը կարող է ունենալ նաև նաև նախահաշվորդ, “CAD” մասնագետ, թարգմանիչ և ադմինիստրատիվ անձնակազմ:

Հիմնական անձնակազմը պետք է ունենա ամբողջական ներգրավվածություն ծառայությունների ողջ ժամանակահատվածի համար:

3. Տեղամասային հսկիչների ներգրավվածության ժամկետը պետք է սահմանվի մինչև յուրաքանչյուր տեղամասային հսկիչի հսկողության ներքո գտնվող օբյեկտի շինաշխատանքների ավարտը և ավարտական ակտի ընդունումը:

Տեխ.հսկողի և անձնակազմի կողմից պահպանման ենթակա նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու ուղղված կանոններ.

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով կազմակերպությունները պետք է առաջնորդվեն հետևյալ հիմնական կանոններով՝

1. Ապահովել պայմաններ՝ ձեռքերի կանոնավոր և մանրակրկիտ լվացման և չորացման համար: Աշխատավայրում ապահովել ջրի և օճառի, ակոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչների, եռաշերտ դիմակների, ձեռնոցների առկայությունը:
2. Ապահովել աշխատողների կողմից դիմակների կրումը:
3. Ապահովել փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները նետելու համար:
4. Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական եկու անգամ (հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափերով, այդ թվում՝ աշխատակիցների անձնական ջերմաչափերով), որից մեկը աշխատակցի անշխատանքի ներկայանալու ժամանակ, մյուսը աշխատանքի վայրից հեռանալու ժամանակ՝ կատարելով համապատասխան նշումներ գրանցամատյանում: Բաժր ջերմության աշխատակցին հեռացնել աշխատանքի վայրից, հորդորելով ինքնամեկուսանալ և դեպքի մասին անմիջապես տեղեկացնել պատվիրատուին:
5. ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի մարտի 16-ի N 977-Ա հրամանի համաձայն՝ սահմանել կանոններ և ընթացակարգեր՝ օրական առնվազն երկու անգամ սահմանված ժամերի ախտահանելու տարածքը (այս դեպքում աշխատանքային ճամբարների տարածքը)՝ դռները, բռնակները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները – սարքերի մակերեսները, լույսի անջատիչները, սարքավորումների վրայի բռնակները, հեռակառավարման վահանակները, ընդհանուր օգտագործման հեխոսները, համակարգիչները, ստեղնաշարերը և մկնիկները), սանհանգույցները:
6. Ախտահանման համար կիրառել քլորի հիմքով կամ 60%-90% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերը՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:
7. Ապահովել աշխատատեղերի միմյանցից նվազագույնը 2 մետր հեռավորությունը (ըստ Առողջապահական համաշխարհային կազմակերպության ցուցումների):
8. Անձնական (դրսի) և աշխատանքային հագուստի պահպանման համար ապահովել արտահագուստի (սանիտարական հագուստի) համար նախատեսված հանդերձապահարաններ:
9. Աշխատավայրում վիրուսով ախտահարված աշխատակից ունենալու մասին տեղեկատվություն ստանալու դեպքում անհապաղ առանձնացնել այն անձանց շրջանակը, ովքեր շփում են ունեցել վարակակիր անձանց հետ և հայտնել պատվիրատուին, ապահովել տվյալ անձանց մեկուսացումը:
10. Աշխատակազմում վարակի կասկածով աշխատակից ունենալու դեպքում զանգահարել Առողջապահության նախարարության թեժ գիծ և պատվիրատուին, հնարավորության դեպքում անմիջապես ախտահանել այն տարածքը, որտեղ աշխատել է աշխատակիցը, ինչպես նաև ցանկացած այլ տարածք և մակերես, որը կարող էր հասանելի լինել տվյալ աշխատակցին:
11. Աշխատողներին տրամադրել իրազեկման տեղեկատվական թերթիկ:

Տեխհսկողը պարտավոր է վերահսկել COVID-19-ի կանխարգելման ուղղությամբ շինհրապարակում ձեռնարկվելիք միջոցառումների կատարմանը: Ելնելով առկա իրավիճակից, տեխ.հսկողը կներկայացնի առաջարկություններ և պատվիրատուի հետ համատեղ կմշակի գործողությունների պլան՝ իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ:

Տեխհսկողի պարտականությունները շինհրապարակում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու ուղղությամբ

Վարչական կարգավորումները

Ակնկալվում է, որ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը կկազմակերպի և կկրի Հայաստանում համապատասխան գրասենյակի վարձակալության և կացության համար, ինչպես նաև աշխատանքների իրականացման տեղամասերում, միջազգային և տեղական

ճանապարհորդությունների և հսկողության իրականացման համար ավտոմեքենաների և իր անձնակազմի ցանկացած այլ տրանսպորտային ծախսերը, գրասենյակային սարքավորումների, կապի միջոցների, ծառայությունների ու սպառվող նյութերի ծախսերը: Տեխսկողը պետք է ապահովի բանավոր և/կամ գրավոր թարգմանությունների իրականացումը, որոնք կարող են պահանջվել առաջադրանքի իրականացման ընթացքում (ներառյալ շինարարական տեղամասերում) և ապահովի փաստաթղթերի և հաշվետվությունների անգլերեն և հայերեն տարբերակների համահունչ և ճշգրիտ թարգմանությունը (եթե դրանք անհրաժեշտ են միջազգային անձնակազմի գործառույթների կատարման համար): Համապատասխան վարչական ծախսերը պետք է ներառված լինեն ծառայության արժեքում:

Ծառայությունների մատուցման ժամկետ*

Սկիզբը	Ավարտը
Կողմերի միջև կնքվող Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ համապատասխան ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների ավարտական հանձնման-ընդունման ավարտը

**(2021 թվականին իրականացվելիք)
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏԵՂԱՄԱՍ 3**

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տեղամաս 3-ում (ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի մարզեր) նախատեսված օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ծրագրի անվանումը

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում

Ֆինանսավորման աղբյուր

2021թ. ՀՀ պետական բյուջե

Պարզվիրարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ծառայության անվանումը

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տեղամաս 3-ում (ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի մարզեր) նախատեսված հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ճանապարհների անվանումները և հարվածները

ՏԵՂԱՄԱՍ 3

h/h	Օբյեկտի անվանումը	Երկարությունը կմ	Մարզ	Շին. աշխ. կատ. ժամկետ (Հաշված՝ շինարարի հետ կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից)
1	2	3	4	5
1	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	15.6		
1.2	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման	4.7		
	կմ284+400-կմ289+100 հատվածի հիմնանորոգում	4.7	Սյունիք	90 օր, ոչ ուշ, քան 2021թ. հուլիսի 30-ը
1.3	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման	3.5		
	կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգում	3.5	Արագածոտն	30 օր, ոչ ուշ, քան 2021թ. հունիսի 30-ը
1.4	Մ10, Սևան-Մարտունի-Գետափ	7.0		
	կմ50+000 - կմ57+000 հատվածի հիմնանորոգում	7.0	Գեղարքունիք	30 օր, ոչ ուշ, քան 2021թ. հունիսի 30-ը
1.5	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս	0.4		

	կմ53+400-կմ53+800 հատվածի ասֆալտապատում	0.4	Գեղարքունիք	90 օր, ոչ ուշ, քան 2021թ. հուլիսի 30-ը
2	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	3.6		
	Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան կմ 26+400 - կմ30+000 հատվածի հիմնանորոգում	3.6	Արարատ	90 օր, ոչ ուշ, քան 2021թ. հուլիսի 30-ը
4	Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում,այդ թվում			
4.2	/Մ-4/ (Վերին Պտղնի) - Մասիսի տրանսպորտային հանգույց (Երևանի շրջանց)			
	կմ6+800 կամուրջի վերանորոգում	1 հատ	Կոտայք	-

Ըստ նախագծային փաստաթղթերի

**Նախատեսված շինարարական
աշխատանքի տեսակը**

**Տեխնիկական հսկողության
ծառայության մատուցման
ծևեր, եղանակներ և ընդհանուր
պահանջներ**

1 Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն, ապահովելով տեխնիկական հսկողության ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեղամասային հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում (<https://www.arlis.am/documentView.aspx?docID=19495>) բերված հետևյալ դրույթների՝

1.1 Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, հսկողական չափագրումներով, աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներով, փորձարկումներով:

1.1.1 Հսկողական ստուգում - պարզում է արդեն կատարված շինմոնտաժային աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին և շինարարական նորմերին և կանոններին: Հսկողական ստուգումը կարող է իրականացվել համատարած կամ ընտրովի:

1.1.2 Բացումը - հողով կամ այլ կոնստրուկցիաներով ծածկված շինարարական կոնստրուկցիաների, կոմունիկացիաների և կառուցվածքների վիճակի ստուգումն է ուղղահայաց փոսերի օգնությամբ կամ ծածկող կոնստրուկցիաների մասնակի քանդման ճանապարհով:

1.1.3 Հսկողական չափագրություն - փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների ստուգումն է տեղում:

1.1.4 Աշխատանքների նախագծային ծավալների ստուգում - աշխատանքային գծագրում կամ նրանց կից նախահաշիվներում նշված աշխատանքների ծավալների ստուգում:

1.1.5 Փորձարկում - լաբորատոր պայմաններում կամ տեղում փորձնական բեռնվածքների գործիքների և մեխանիզմների օգնությամբ կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի կրողունակության, ամրության, տարբեր տեսակի մեկուսացման, ինչպես նաև այլ ֆիզիկամեխանիկական և տեխնիկական հատկությունների ստուգումն է նախագծի պահանջների և նորմերի հետ համեմատելու նպատակով:

1.2 Ստուգումների և դիտարկումների արդյունքները ձևակերպվում են ակտերով, արձանագրություններով, ուրվագծերով, գծագրերով, լուսանկարներով, տեսաֆիլմերով և նրանց կից համեմատական ամփոփագրերով, աշխատանքային գծագրերով, շինարարության վարման ընդհանուր մատյաններով:

1.3 Շինմոնտաժային աշխատանքների որակի, օգտագործվող նյութերի, իրերի և կառուցվածքների որակի, աշխատանքների կատարման տեխնոլոգիաների և այլնի հետ կապված նկատված թերությունների վերացման ցուցումներն ու նկատողությունները գրանցվում են սահմանված ձևի շինմոնտաժային աշխատանքների վարման ընդհանուր մատյանում:

1.4 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են՝

1.4.1 մասնակցել ավտոճանապարհների, տրանսպորտային օբյեկտների և ինժեներական կառուցվածքների նշահարմանը, շինարարության ընթացքում ապահովել գեոդեզիական ստուգողական չափումներ և չափագրություններ,

1.4.2 համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցնել ինժեներական սարքավորումների տեղադրման, գրանցման և փորձարկման հետ կապված հարցերը,

1.4.3 պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին,

